




ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՒԹՅԱՆ
ԳԵՂԱՐԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՒԹՅԱՆ
ԳԵՂԱՐԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ


ԿՐԹԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ՏԵԼԵԿՐԱԳՐԱԿԱՆ

ՇԱԲԱԾԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ՊԱՏՐԻԱՐԻԱՐԱՆԻ



ՀԱՍՈՒՆԵԱՆ ՏՊԱՐԱՆ
ՀՌՈՎՄ



1. Կաթողիկէ Արձագանգը առ այժմ կը հրատարակուի ի Հռոմ: Առաջին վեցամսեայի բաժանորդագիւնն է մէկ մեծիս անոնց համար որ ի Կ. Պօլիս՝ Կաթողիկոսարանի մէջ, իսկ ի գաւառս՝ Եպիսկոպոսարաններու կամ Առաջնորդարաններու մէջ կ'ուզեն բաժանորդագրուիլ: Ուղղակի Հռոմ դիկելու համար՝ Չորս (4) ֆրակ է: Հասցեն է. Collegio Armeno, 31 S. Nicola da Tolentino. Roma — Երբ ի մօտ Կ. Պօլիս փոխադրուի, ծաւալն ու ձեւը, ինչպէս նաեւ բաժանորդագրութեան պայմանիք վերջնականացիս պիտի հշտնան: — Մեկ թիւը՝ մէկ դանեկան է:
2. Արձագանգը կը հրատարակուի Եաքաթ օրերը:
3. Խնդագրութիւնս պարտաւորեալ չէ անպատճառ կամ նոյնութեանը հրատարակելու իրեն դրկուած ո՛ր է յօդուած:
4. Ասորագրեալ յօդուածոց պատասխանատուութիւնը ամբողջովին կը մնայ գրողներուն վրայ:
5. Նամակ եւ յօդուածներ կը դրկուին ուղղակի խմբագրութեան:
6. Ձեռագիրներ եւ չեն դարձուիր:
7. Ծանուցեալց համար մասնաւոր պայմանադրութիւն կը կատարուի:



ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՈՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆԻ ՏՆՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆԻ


Առաջին Տարի

16 Դեկտեմբեր 1911

Թիւ 26.

ԱՁԴԱՑԻՆ ՊԱՏՐԻԱՐԺԱԿԱՆ ՍԻՆՆՆՈՂԱՆ

Ի ՀՌՈՎ Մ



Ազգային Պատրիարքական Սիննոդոսն իր գործն աւարտեց և ամենայն կարգաւորութեամբ և ամենուն գոհունակութեամբ փակուեցաւ :

Իւր վերջին պաշտօնական և հանդիսաւոր Նիստն, որ Եօթներորդն եղաւ ըստ կարգի, գումարուեցաւ յՑ Դեկտ. Ի, Ուրբաթ, օր տօնախմբութեան Անարատ Թղութեան Սրբոյ Կուսին: Վերջին Համագումարներուն մէջ ամէն ինչ մանր քննուած, ուսումնասիրուած և փութով, զի մի՛ գուցէ կարևոր բան մ'աննշմար անցնէր, այլ ընդհակառակն՝ ինչ որ փափաքելի էր բարեկարգութեան համար, իր տեղը գրաւէր այն Սինոդական Գործոց մէջ, որ՝ Տեսան յաջողելով, և Ս. Աթոռոյ հաստատութիւնն ընդունելէ վերջը, կանոն առնելեաց պիտի ըլլար Հայ-Կաթողիկէ Հասարա-

կութեանս, Մատեան մը Իրաւանց, զոր միշտ կը ցանկայինք և չունէինք: Ուստի մնացած ումէն Տիտղոսներն այլ ևս պատրաստ էին սինոդական վճիռն ստանելու:

Նոյն օրը առաւօտեան ժամը Յին, յեկեղեցւոյ Ս. Նիկողայոսի Տաւրիմոսեոյ Հայկազնեան Ք. Դպրոցին, գումարեցաւ Սինոդոսը, սկիզբն առնելով հանդիսաւոր Զայնաւոր Պատարագէն, զոր մատոյց Արհի. Յովհան Եպ. Գուգիան Վիճակաւոր Աղեքսանդրիոյ Եգիպտոսի: Ս. Զահր մատոցուեցաւ ի հանգիստ հոգւոյ ողբացեալ Յարութիւն Արք. ի Բուպիան, որ զայս արամադրող կտակ մը հաստատած է այս նաւիրական օրուան համար: Ի վախճանի Պատարագին կատարուեցաւ նաև Պաշտօն Նշնեցելոց, մի և նոյն գիտաւարութեամբ: Ապա կատարուեցան մաղթողական արարողութիւնք, աղերսագին կոչումն Հոգւոյն Սրբոյ, Շարականք, Աղօթք, Սաղմունիք, որոնք վերջին Նիստին համար պատշաճեցուցուած էին. Աւետարանն էր Մատթէոսի Վերջին Գլուխին վերջին հատուածը, որով Քրիստոս Տէրն մեր իւր աշակերտները զրկելով բոլոր աշխարհ քարոզելու և սորվեցնելու, կը խոստանայ միանգամայն որ բնաւ պիտի չլքանէ զերենք, այլ միշտ և հանապոզ ամանց հետ պիտի մնայ և պիտի օգնէ յամենայնի. « Եւ ահաւասիկ ես ընդ ձեզ եմ զտեւնայն առաքս » միեջեւ ի կատարած աշխարհի »:

Ապա՝ ըստ սովորականին, Հարք զգեստաւորեցան Հայրապետական զգեստներով, և յառաջացան ի ժողովատեղին և ըստմեցան իրենց Աթոռներուն վրայ: Այս անգամ՝ նկատելով Արարողութեանց երկայնութիւնը, քարոզ չխօսուեցաւ:

Ս. Սինոդոսը, առանձին մնացած, յետ ընթերցման՝ վճռեց մնացեալ տիտղոսներն, մինչև ցմեհասաներորդ ներփակարար, ինչպէս նաև վերջին « Գլուխ Միակ » ք, և իւրաքանչիւր ըստ կարգի երիցութեան՝ ստորագրեցին և կնքեցին ամբողջ Անթուհիան Գործքը, ինչպէս և ամէն Պաշտօնեայք:

Եւ ինչպէս որ օրուան գեղեցիկ և երջանիկ դիպողութեան պատշաճութիւնը կը բերէր, մասնաւոր յօգուածով մը Սինոդական Գործքն և մեր Հասարակութիւնը որտաղին երախտագիտական ոգով նաւիրուեցաւ Անուրատ Յզացեալ Կռսի Աստուածամօրն, որ հզօր և զթառառ Պաշտպան է մեր Եկեղեցւոյն և որուն երկնաւոր հովանւոյն ներքև դրուած էր մասնաւորապէս մեր Պատրիարքութիւնը՝ յերջանկայիշատակ Բենեդիկտոս ԺԴ. Քահանայապետէ:

Եւ սովորական Բարենադրութիւններ թողուելով մերձակայ Կիրակի օրուան, յարում հանդիսական Փակումը պիտի կատարուէր Սինոդոսին, Նիստն աւարտեցաւ ի միջօրէի:

Նոյն օրը երեկոյին ի պատիւ Անարատ Յղացելոյ Կուսին Հայկազնեան Ք. Լեւոնեան Դպրոցը փառաւոր Լուսավարութիւն մը կատարեց ըստ սովորութեան, առաւելագոյն չքեղութեամբ մը շեշտելով զայն՝ նաեւ Սինոդոսին աւարտման ի պերճ յիշատակ և ի նշանակ ընդհանուր խընդութեան:

Սինոդական Գործքը հետեւեալ Տիտղոսները կը բովանդակէ.

Ա. Յաղագս Կաթողիկէ Հաւատոց

Բ. » Եկեղեցւոյ, Նուիրապետութեան նորին եւ փարչութեան

Գ. » Խորհրդոց եւ խորհրդականաց

Դ. » Աստուծային Պաշտման

Ե. » Բարեկարգութեան Ժառանգաւորաց

Զ. » Կրօնաւորական Հաստատութեանց

Է. » Զարգացուցանելոյ գործիսնական վարս ի մեջ հաւատացելոց

Ը. » Այլեւայլ Հաստատութեանց

Թ. » Ժամանակաւոր Ստացուածոց Եկեղեցւոյ

Ժ. » Եկեղեցական Դասակնոց

Ժա. » Դասասանաց

Ժբ. Գլուխ միակ. Սահմանադրութիւնք այսր Սինոդոսի

Ազգային Պատրիարքական Սինոդոսին փակման հանդէսը մեծաւ չքեղութեամբ կատարուեցաւ Կիրակի օր, 10 Դեկտեմբեր: Մասնաւոր հրաւիրադրեր ղրկուած էին բարձրատիճանի անձնաւորութեանց և բոլոր գլխոյններու և Միաբանութեանց: Բնական էր որ Հռոմոյ մէջ այսչափ հռչակ հանած ազգային հայ Կաթողիկէ Սինոդոս մը իր փակման հանգիսին օրը պիտի շահագրգռէր ընդհանրապէս ամէն անոնք որոնք Եկեղեցւոյ երեւելի գէպքերուն հետամուտ են, և ի մասնաւորի այն ամէնքը որ առանձինն կերպով հաճոյք մը կը զգան արեւելեան մասնաւորնոց հայ արարողութեան վեհ և ազնիւ ծիսակատարութեան հանդէսին ներկայ գտնուիլ և պահ մը խորհրդաւոր զմայլանքով նկատել անոր վստահութիւնն և հպեւրական ազդեցութիւնը:

Աւաւօտուն, ժամը 8 ին Ամեն. Գերերջ. Հոգևոր Տէր, Պօղոս Պետրոս ժԳ. Թէրզեան, հանդիսաւոր Հայրապետական Զայնաւոր Պատարագ մատոյց Ս. Նիկողայոս Եկեղեցւոյն մէջ, ի ներկայութեան ամենայն Սինդակական Հարց, որոնք հայրապետական զգեստներ հագած էին: Ինչպէս Սինդոսի բացման օրը, նոյնպէս և այսօր ի փակման, արարողութիւնք կատարուեցան ամենայն խղճամիտ ճշդութեամբ: Թափօրը հանդիսաւորապէս մուտ գործեց յիկեղեցի Աւանդատան դռնէն և յառաջացաւ մինչև ի մեծ Դռուն, ուր շարուեցան երգիչներն ու պաշտօնեայք և Հարք ըստ կարգի և Հոգևոր Տէրն սկսաւ Ս. Պատարագը: Եւ ապա յառաջացան յաւաք Սեղանն. և ամենայն ինչ կատարուեցաւ ըստ կարգի: Առնթնթրակայ էին Հոգևոր Տիրոջ քով Գեր. Գէորգ Գեր. Թերզկապաշեան և Գերյ. Հ. Գրիգորիոս Ծ. Վ. Գալեմքեարեան: Աւետարանակրութեան, Աւետարանի ընթերցման և Վերաբերման սպասաւորեցին Արհի. Հարքն՝ Ռաքոսեան, Գովրիկեան և Մարյեան Արքեպիսկոպոսունք: Միաշունչ, յաղիչ և հոգեւանդն էր երգեցողութիւնը: Դպրաց դասին կը մասնակցէին նաև Բրօթականտայի եօթն հայ աշակերտները, հայրենաւանդ արարողութեանց գեղեցկութիւնէն սրտագին ուրախութեամբ զգածաւած:

Յաւարտ Պատարագին նախ հայերէն և ապա իտալերէն լեզուաւ Աւագ Սեղանոյ առջևէն հրատարակուեցաւ Լիակատար Ներողութիւնն զոր բարեացակամ հաճութեամբ 'լը շնորհէր Սրբազան Քահանայապետն ամէն ներկայից, ապա կատարուեցան Սինդակական Բարեմաղթութիւնքն, որոնց մով կը կնքուի Սինդոսի փակումը: Կատարեցին զանոնք՝ Դիւանն Սինդոսի և Հարքն, փոխն ի փոխ: Ամենապ. Կ. Պատրիարքը՝ ինչպէս և Հարք, կանգուն կեցած էին իրենց Աթոռներուն առջև. իսկ Պաշտօնեայք Սինդոսի խմբուեցան Աւագ խորանին առջև. և սկսան հետզհետէ հրաւիրել բարձրածայն Ս. Սինդոսը որ կը պատասխանէր գեղեցկայարմօր դրուատեօք ի փառաբանութիւն Ս. Երրորդութեան, և Քրիստոսի Աստուծոյ մերոյ՝ մօրգասիրի Թշազաւորին յաւիտենեց, և փառաւորեալ և օրհնեալ միշտ Սրբոյ Կաւսին, ի գովառանս սրբոց գլխաւոր Առաքելոցն Պետրոսի և Պօղոսի, Սրբոյն Լեւոնի Մեծի՝ Քահանայապետի, որոյ բերանով խօսեցաւ Պետրոս, Սրբոյ պանծալի Հօրն մերոյ երիցս երանեալ Գրիգորի Լուսաւորչի, նոյնպէս և Ս. Նիկողայոսի Տօլենտինայ (Քլաստովանողին) որ կարգեցաւ ի Փլորենտեան ժողովի, պաշտպան միութեան Արեւելեան Եկեղեցւոյ ընդ Սրբոյ Քահուն Հռոմայ, ապա յաջորդեցին մաղթանքներ վասն թանկագին կենաց և երջանկութեան Սրբազան Հօրն մե-

րոյ Պիոսի Ժ.ի Քահանայապետին. նաեւ վասն Գահերէց Միրանաւորին Ս. Ժ. Տարածման Հաւատոյ. և վասն Գերերջանիկ և բազմերախտ Կաթողիկոսին մերոյ Տ. Պօղոսի Պետրոսի ԺԳ. ի և վասն Եպիսկոպոսաց և յաղագա հարց և եղբարց մերոց և համօրէն ժողովրդեանս:

Այս յուզիչ արարողութիւնէն վերջը կ'աւարտէր առաւօտեան գեղեցիկ հանգչսը:

Անմիջապէս հետեւալ հեռագիրը գրկուեցաւ տո Սրբազան Քահանայապետին, Պիոս Ժ.

«Ազգային Սիւնհոգոսին հանգիստաւոր փակումը կատարելով, հոս գումարուած Հայ Պատրիարքն և Եպիսկոպոսունք վերստին կը կրկնեն շնորհակալեաց և անշինջ երախտապարտութեան և անսփոփս յարումի զգացումներն տո Աթոռն Պետրոսի և որդիական անձնանուիրութեան առ օգոստափառ անձն ֓ոխանորդին Քրիստոսի. կը հայցեն Առաքելական Օրհնութիւն իրենց կղերին և հայ ժողովրդեան համար »:

Հետեւեալ պատասխանն եկաւ հեռագրաւ.

« Սրբազան Հայրն հաճեցաւ յազգային Սիւնհոգոս գոթմարելոց հռոմեղադին մեծարանքը. կ'առաքէ անոնց ի Դոլոր սրտէ Առաքելական Օրհնութիւն, գրաւական երկնաւոր շնորհաց:

Կարդ. Մէրի տէլ Վալ

Կէսօրէն վերջը սահմանուած էր մասնաւոր ծխակատարութիւն մը հրապարակաւ շնորհակալութիւն յայտնելու համար աստուածային Նախախնամութեան, որ հաճեցաւ յաջողութեամբ ի յանգ հանել Համարակութեանս համար այսքան կարեւոր ձեռնարկ մը, որ բնաւ իր նմանը չէր ունեցած և որուն շուայուած էին առանձինն շնորհքներն մեծ և սրբակեաց Քահանայապետի մը, որոյ Օրհնութեամբն անշուշտ կրցաւ այս մեծ գործը պսակուիլ աւելի քան փափաքելի էր. այս ամէնը արդէն բաւական ազհաւատչեայ զրաւական մը կը կազմէին որ Հատարակութեանս հոգեւոր բարւոյն համար արդիւնաւոր պիտի ըլլար յաւէտ այս Սիւնհոգոսը:

Արդ, այս արարողութեան աւելի մեծ չքեղութիւն մը տալու համար Վսեմ. Կարդ. Կօթթի Գահերիցուն տկարութեան պատճառաւ, — հրաւիրուեցաւ Նորին Վսեմութիւն Կարդինալ Վիվէս ի Թուրոյ, Տարածման Հաւատոյ Ս. Ժողովոյ անգամ, հռչակաւոր Սպանիացին, Վեղարաւորաց Կարդէն, նշանաւոր մատենագիր և մեծ սրեկրասէր:

ժամը Յին Եկեղեցին լեցուած էր խուռն բազմութեամբ: Ամենապատիւ Կ. Պատրիարքը և Սինոդական Հարք՝ փիլին զգեցած, նստան դատումէջ իրենց աթոռներուն վրայ: Սինոդական Հայր Արհի. Յովսէփ Արքեպիսկոպոս Թէոտորովիչ, հայազգի Վիճակաւորն Լէմպէրկի, հայրապետական զգեստներով յամպիոն բարձրացաւ, և տաճարը լեցնող այն բազմամբոխ հաւատացելոց առջև արտասանեց գեղեցիկ բանախօսութիւն մը, երկու Քահանայապետաց Լեւոնի Ժ. Գ. և Պիոսի Ժ. Լ. միջև զուգակշիռ համեմատութիւն մը հաստատելով, և ապա յիշատակելով անոնց բարեացակամութիւնն դէպ առ մեզ. և վերջացուց սրտաշարժ կոչ մը ուղղելով առ Սինոդական Հարս, և մաղթանք բարեաց առ Հայրն Գթութեանց: Թէոտորովիչ. Արք. շուրջ երկու ամիս անձնուիրաբար գործակցած էր Սիւնհոգոսի, հաւատաւելով որ իւր երակներուն մէջ կ'եռար ճշմարիտ հայ արիւն, և միտքն ու սիրտն ազնուացած էր կաթողիկէ ճշմարտութեան գերաստիճան մշակութեամբ. իւր այս գործունէութեամբ ապացոյց մը տալ կ'ուզէր կարծես իւր համերաշխութեան՝ իր սիրեցեալ համազգի հայ կաթողիկէ Հասարակութեան, որմէ պատահաբար հեռու կը գտնուէր աշխարհագրական դիրքով, և Նուիրապետական զուգակցութեան անբաժնեկից: Այս ինքնայոժար հռանդուն ազգասիրական արտայայտութիւնը վսեմադայն փայլ մը կը գլուխէր Արհի. Դիտապետին մեծարելի զէմքին վրայ: Հոն գիտատեաները մեծաւ ուշադրութեամբ ունկնդրեցին և հետեւեցան հաւակաւոր գիտնական Արքեպիսկոպոսին խորաթափանց ցուցմունքներուն և մեծապէս գոհ մնացին: Մենք ալ, եթէ հնար ըլլայ, թարգմանութեամբ պիտի տանք այս բանախօսութիւնը:

Քարողէն վերջը Աւանդատան գոնէն մասաւ եկեղեցւոյ մէջ և սկսաւ յառաջանալ թափորը: Պաշտօնեաներէն յետոյ կուգային Սինոդական Հարք, հայրապետական զգեստներով. ապա Ամենապատիւ Պատրիարքը իւր Արարողապետով և աւելնթերակայիւք, որմէ վերջը կուգար Վսեմ. Կարդիւնալը, շրջապատուած իր եկեղեցականներուն խումբէն, մինչդեռ երգեհոնը կը հնչէր քաղցրալուր: Թափորը ժողովրդեան մէջէն անցաւ զհաւաք, և Եկեղեցւոյ մեծ գոնէն դառնալով մտաւ դասին մէջ: Սինոդականք գնացին կարգաւ իրենց աթոռները, և Վսեմ. Ծիրանաւորն ելաւ ի բեմ իրեններուն հետ և յառնկայս դնորձան առ ժողովուրդն, տալու համար Քահանայապետան Օրհնութիւն և Լիակատար Ներողութիւն, զորս Սրբազան Քահանայապետը մասնաւոր կը շնորհէր վերջին անգամ, հրտարակութիւնը եղաւ լսողներէն և հայերէն լեզուներով: Յետ որոյ Սրբութիւն

Սրբոց դուռելով ի բազմոցի, Կարդինալը դասուն մէջ հնչեցուց « Զքեզ Աստուած գովաբանեմք » օրհներգը, զոր երգիչներու դասը շարունակեց ժողովրդեան հետ փոխն ի փոխ: Երգեցողութիւնը հմայիչ էր. նօթագրած էր զայն Դպրոցին Եւրոպական երգի դասատուն՝ Հ. Ռ. Անթովիզէի, Քա- հանայապետական Դպրապետ աշխարհահռչակ Բէրօզիի անեղաշունչ և վսեմ կտորները կը յիշեցնէր: Դպրոցին հայ աշակերտները ցոյց տուին իրենց գովելի յառաջադիմութիւնը՝ նաև եւրոպական երգեցողութեան մէջ: Ս. Հաղորդութեան Օրհնութիւնը տուաւ Վսեմ. Կարդինալը. և թափառը մի և նոյն կարգով անցաւ ժողովրդեան մէջէն և գնաց յաւանդատուն:

Վերը, Դպրոցին ընդունիլութեան սրահին մէջ, պատրաստուած էր պատշաճաւոր նախընթրիք մը, որուն մասնակցեցան բազմաթիւ հրաւի- րեալք: Կը նախագահէր Վսեմ. Կարդինալ Վիվէս ի Թոթոյ, որ ամենուն շնորհաւորութեանց և խնդակցութեանց մէջ փոքրիկ ճառ մը արտասանեց, զոր կրնանք հետեւեալ կերպով ամփոփել:

« Այս գումարումէն բաժնուելէս յառաջ, բոլոր Միբանաւորը, կ'ուզեմ որտաղին շնորհաւորութեան քանի մը խօսք ուղղել Ամենապ. Պատրիար- քին և Արհի. Եպիսկոպոսացն Հայոց:

« Ես ժամանակաւ Հայոց հետ ամենալաւ յարաբերութիւններ ունե- ցած եմ. և զիրենք ճշմարտապէս և ի բոլոր սրտէ կը սիրեմ. այս յարա- րեութիւններն ամենատիրտ եղած են՝ երբ մեր Մայր-Վանքը այս Հայ Դպրոցին պատկանող կից շէնքին մէջ կը գտնուէր, ոչ միայն Մեծաւորաց հետ, այլ և նոյն իսկ հայ սանուց հետ, որոնք ստէպ կուգային գտնելու և տեսնելու զիս:

« Հայ ազգը հռչակաւոր ազգ մը եղած է. միշտ ջերմեռանդն, միշտ հաւատարիմ Ս. Հաւատոյ. սիրող իւր պերճափառ աւանդութիւններուն: Ինքզինքն այսպէս պահպանել կարենալու համար հարկ եղաւ իրեն մաքա- ռիլ և կոսելի արեամբ չափ. և այսպէս տուաւ բազմաթիւ մարտիրոսաց խումբ մը:

« Կան այո՝ բաժանեալք, կան այնպիսիներ որք տուրուած են մոլո- րութեան և խաբուած. բայց ստոնք ալ արդեամբք կը պահեն ի խորս սրտի այն բարի սերմը որ պիտի կարենայ զանոնք փրկել:

« Այս բանիս ուրեմն պէտք է ստուգիւ որ Հովիւներուն հնարիմաց գործունէութիւնը ջանադիր ըլլայ, հարկ է որ անոնք հսկին անդադար և առաքելական եռանդ ունենան: Դուք ժողովուեցաք ի Հռոմ. ի Հռոմ՝ ուր ո՛չ ոք ասպնջական է, ոչ ոք պանդուխտ. ի Հռոմ՝ որ ամէն Կաթողիկէից

հայրենիքն է. և հոս սինոդաբար աշխատեցաք ձեր Եկեղեցւոյն բարեկարգութեան. և ես կարի իսկ երջանիկ եմ որ այս Սինոդոսին փակուամի հանդէսն ինձ վիճակեցնաւ այսպէս կրցայ մասնակից ըլլալ ձեր ուրախութեան:

« Զեր արարողութեան գեղեցկութիւնն, որուն մէջ ձեր Հարց զգացումներուն վեհութիւնն փոխանցուած է, պէտք է խրախուսէ զձեզ յաջողութիւն յուսալու ձեր առաքելական աշխատութեանց մէջ: Պիտի չպակսին վիշտեր և նեղութիւններ, զորս Քրիստոս նախագուշակեց իր Առաքեալներուն. և առաքեալներ էք դուք ալ, այո՛, առաքեալներ էք բառին բուն և ճշմարիտ նշանակութեամբ. քանզի կ'երթաք առաքելութեանց, ուր պիտի ապրիք և պիտի վարուին ձեր հետը առաջին առաքելականութեան պէս: Բայց մի՛ վհատիք:

« Մեր փրկիչն Յիսուս Քրիստոս յաղթութիւնը խոստացաւ անցեալ կատարեալի իմաստով. « Ես յաղթեցի աշխարհի »: Այս կը նշանակէ թէ յաղթութիւնը եղած չնցած գործ մըն է. և ինչպէս կ'ըսուի ռամկորէն՝ « Գրպանիս մէջն է », ձերիք զայն՝ այո՛, ձեզի հետ, գնուած ձեր մարտիրոսներուն արիւնովը:

« Վատահութիւն ունեցէ՛ք մասնաւորապէս Ամենաուրբ Կուսին վրայ որ թագուհի է Առաքելոց. որուն այնքան ջերմեռանդ է Հայաստան. Հայաստանի Աստուածածին Մայրը ապահովէ այն բարիքը զոր դուք կը փրկուէք:

« Վիշտեր, անձկութիւններ պակաս պիտի չըլլան: Բայց խաչով կ'երթըցուի առ լոյսն (per crucem itur ad lucem): Ուստի Աստուածածնայ պաշտպանութեամբ զօրացած, գնացէ՛ք արիւթեամբ:

« Պիտի բաժնուիք Հռոմէ՛ս պիտի բաժնուինք իրարմէ. բաժանումը միշտ իր տխուր կողմն ունի: Բայց յիշեցէ՛ք որ Ս. Հագորդութեան մէջ, Յիսուսի Սրտին մէջ ի Ս. Խորհրդեան՝ ամէն հեռաւորութիւն վերցուած է. և մենք կը գտնուինք իրարու մօտ: Եւ Աստուածածին Մայրն բանալի է այս Ս. Սրտին: Փարկնք միութեան այս կենդրոնին, որուն երկրպագութեամբ և Օրհնութեամբ հանդիսաւորապէս փակեցինք Սիւնհոդոսը. և այս՝ ապահով գրուական մըն է յաջող ելքի:

« Այս անկեղծ զգացումներով յիշողներս ամէնքդ ալ, Պատրիարք և Եպիսկոպոսներ. և կը մաղթեմ որ Տէրն ինքնին առաջնորդ ըլլայ ձեզ՝ ձեր առաքելական ձեռնարկներուն մէջ, ի փառս իւր, ի բարգաւաճանս Ս. Եկեղեցւոյ, և ի բարին ձեր ազնուական ազգին »:

Գրկնուած ծափերով ընդունուեցաւ այս իմաստալից խօսակցութիւնը.

և Պատրիարք ու Եպիսկոպոսներ իրենց շնորհակալութիւնը յայտնեցին բարեհաջակամ Միրանաւորին: Բարեմաղթութիւններ ևս կատարուեցան Սրբազան Քահանայապետին կինաց և երջանկութեան համար:

Եւ ընդհանուր խնդութեան և խանդավառութեան մէջ աւարտեցաւ Սինոդոսի փակման այս նշանաւոր և անջնջելի յիշատակաց արժանի հանգէսը:

ԲԱՆՍԽՈՍՈՒԹԻՒՆ ԱՌ ՍԻՆԶՈՂՈՍ

(Ծարուակութիւն)

« Արածեցե՛ք որ ի ձեզ հօտ է Աստուծոյ »: Ահա, մեծարելի Հարք, ահա համառօտիւ այն յորդորն զոր իմ բերնով կը կրկնէ ձեզ Առաքելապետը՝ Երեք անգամ վրայէ վրայ լսած էք Ս. Պետրոս Յիսուսի խօսքը. « Արածեա՛ զոյխաւս իմ » (Յովհ. ԻԱ. 13-19): Արդ միեւնոյն խօսքը՝ զոր իւր Վարդապետին բերնէն ընդունած էք, նա ձեզ կը կրկնէ, ձեզ որ հալորդակից էք մի և նոյն սրբազան պաշտաման. « Արածեցե՛ք որ ի ձեզ հօտ է Աստուծոյ »:

« Հօտ է Աստուծոյ »: ուրեմն այս հօտը ձերը չէ, չէ այն՝ երկրաւոր տիրոջ մը հօտը, այլ Աստուծոյ հօտն է: Բոլոր քրիստոնեայ ժողովուրդը՝ հաւատոյ ու եղբայրութեան մի և նոյն կապով միացած, կը կազմէ միայն մէկ հօտ: Իւրաքանչիւր Եպիսկոպոսի յանձնուած հաւատացեալները՝ քրիստոնեայ մեծ ընտանիքին միայն մէկ մասը կը կազմեն:

Այսքան ազնիւ պաշտօնի մը ընտրուած ըլլալով, կատարեցե՛ք զայն՝ ո՛չ ակամայ, այլ լրութեամբ սիրոյ, հակառակ վտանգաց հալածանքներու և նաեւ մահուան, որոնցմով շրջապատուած է ձեր բարձր արժանապատուութիւնը. քաջարի ոգւով և վեհանձնութեամբ, պատրաստակամ գտնուելով ամէն ինչ ընելու և ամէն բան քաջելու՝ Յիսուսի Քրիստոսի ամենաթանկագին արեամբ փրկուած ոչխարներու սիրոյն համար. « Վերակացու լինե՛ք մի՛ իրեւ ալամայ, այլ կամաւ շոտ Աստուծոյ »:

Եւ ի՞նչպէս պիտի արածէք այս հօտը Ամենէն առաջ՝ Աստուծոյ խօսքին քաղցութեամբ: Աւա՛ղ. ո՞րչափ ճշմարիտ է Մարգարէին տրտունջը. « Տղայք ինչ խնդրեցիմ, եւ ոչ ոք եր քրդեք ինձ » (Ողբ. Դ. 4.): Ոչ՝ երբեք, ինչպէս այսօր, հարկ եղաւ ողբալ այնչափ տգիտութիւն՝ հաւատոյ ճշմարտութեանց վրայ, այնչափ անտարբերութիւն գերբնական կարգի նկատմամբ. արդ, ու՞ր կը տանի այս տգիտութիւնը, այս անտարբերութիւնը, եթէ ոչ կրօնական պարտուց զանցառութեան, Աստուծոյ բաներուն ամբարհաւած անարգութեան, Քրիստոսի Եկեղեցւոյն ուրացութեան: Զեր պարտքն է, ո՛վ մեծարելի Հայրեր, ժողովրդաց քով իրենց նախկին պատուոյն մէջ վերահաստատել Եկեղեցւոյ Վարդապետութիւնները, հսկել՝ որպէս զի

տղայոց մատղաշ մտքերուն մատակարարութիւն այն փրկարար կերակուրն քրիստոնէական-վարդապետութեան՝ որ ամենալաւ պատրաստութիւնն է ճշմարտապէս քրիստոնէական կենաց, ամենէն ազդեցիկ դեղութիւնն է մոլորութեան ժանտախտին դէմ:

Ճշմարտութեան խօսքը տարածելու եռանդեան հետ պիտի միացնէք, ո՛վ մեծաբերի Դիտապետք, ամենահոգատար խնամքն սրբազան Արարողութիւններու պահպանութեան, որոնք այնքան հաւատարմութեամբ ժառանգութիւն աւանդուած են ձեզ՝ ձեր փառապանծ Նախնիքներէն: Թանկագին և շքեղ գոհարներ են յիրաւի զանազան ծէսերն որոնցմով ի յայտ կուգան մեր հաւատքին խորհուրդները: Անոնց հիանալի պէսպիսութեան ներքեւ կը ծածկուի կաթողիկէ պաշտաման միութիւնը: Այն սրբազան արարողութիւններն՝ լոկ բայց պերճախօս քարոզութիւն մըն են մեր հաւատքին ամենանուիրական ճշմարտութեանց: Պահպանեցէ՛ք ուրեմն իբրեւ անգին ժառանգութիւն մը այն սրբազան արարողութիւնները: Գործադրեցէ՛ք զանոնք խղճի մտօք ինչպէս ձեր նախնիք: Անոնք իրենց արեամբը կնքեցին այս արարողութիւններով խորհրդաբար նշանակուած սուրբ հաւատքը, ծառային ձեզ նոյն արարողութիւնները իբրեւ գործիք՝ արծարծելու հաւատացելոց մէջ մեր սուրբ կրօնքին խորհրդոց ջերմեանքութիւնը:

Բայց ի՞նչ կերպով պիտի կարենաք ձեր ժողովրդաց հաղորդել կայծ մը այն սիրոյն առ Յիսուս Քրիստոս, որ հրաբորբոք կը վառի ձեր կուրծքերուն մէջ: Ո՛հ սէրը զարմանալի հնարքներ ունի թափանցել տալու ամենուրեք անուշն և անուան հետ յարգութիւնն ու խանդաղատանքն դէպ առ սիրեցեալ առարկայն: « Սէրն ֆրիւսոսի սօփյակ զմեզ » (Ք. Կոր. Ե. 14.): Այո՛, Քրիստոսի սէրը պիտի մղէ զձեզ ստեղծելու՝ ձեր թեմերուն մէջ, ձեր ժողովրդապետութեանց մէջ, բարեպաշտութեան կենդրոններ, որոնց մէջ, իբրեւ նոյնքան կրակարաններու մէջ, պիտի պահպանուի և աճի բոցն որ պիտի զօրէ վերարծարծելու հաւատքն ու սէրն առ Քրիստոս՝ ուր որ անոնք մարած ըլլան, վերակենդանացնելու՝ ուր որ անոնք սկսած ըլլան տկարանալ, կամ սպառնան շիջանիլ: Պաշտամունքն առ Յիսուս ի Ս. Հաղորդութեան սկիզբն և ակնազրիւր ամէն օրհնութեան, ջերմեանդութիւնն առ փառաւորեալ Թագուհին Երկնից, Փրկչական մարդկային ազին, վստահական դիմումն առ ամենամաքուր փեսայ Նորին՝ Ս. Յովսէփ, Պաշտպան ըն հանուր Եկեղեցւոյ, պիտի մատակարարեն ձեզ նպաստաւոր միջոցներ՝ փութացնելու համար ձեր ժողովրդոց մէջ լաւ ևս իմացուած և աւելի ազդուօրէն ի գործ գրուած հոգեւոր կեանքի վերադարձը:

Ձայս ընելու համար օրինակ մ'ըլլայ ձեզ այն փառաւոր Սուրբն զոր հիշդ այսօր Սուրբ Եկեղեցին կաթողիկէ տիեզերաց մեծարանքին առարկայ կ'ընէ, մեծն փրանկիսկոս Քաւերեան: Ո՛հ, ինչե՛ր կրնայ ընել, Աստուծոյ Թագաւորութիւնը տաբածելու համար, Անոր սիրովը ճշմարտապէս գրաւեալ սիրտ մը: Նկատեցէ՛ք Սուրբ Իգնատիոսի այս զաւակը: Մտածում մը միայն բռնած է իր միտքը, փափաք մը միայն կը չարչարէ իւր սիրտը: Կարկ է որ ամբողջ աշխարհ նուաճուի իր Թագաւորին, Յիսուսի Քրիստոսի: Չունի այլ ևս դադար: Հունի այլ ևս հանգիստ, ամենուն ամէն բան կ'ըլլայ, բաւական որ շահի հոգիներն խաչեցեալ Փրկչին սիրոյն վշտաց և աշխատանաց կեանքէ մը վերջ կը մեռնի, իբրեւ անվեհեր զօրական, հակաստամար-

տի դաշտին վրայ. բայց մեռած պահուն կրնայ նուիրել իւր Տիրոջն ու վեհապետին իր յաղթութեանց աւարները. և ի՞նչ աւարներ: Այն գերազանցաբար ծաղկեալ եկեղեցիներն, սիւռուած Հնդկաստանի մէջ, որոնք այն ամբողջ կայսրութեան ամենագեղեցիկ զարդերն են: Զգեցարո՛ւք, ո՛վ մեծարոյ Հարք, Քսաւերեան փրանկիսկոսի առաքելական հոգին. հեղէ՛ք զայն ժառանգաւորաց մէջ, որոնք կոչուած են ձեզ օգնելու և նաև ձեզ յաջորդելու Առաքելական պաշտաման մէջ. և պիտի տեսնէ՛ք թէ որպիսի պտուղք սրբութեան պիտի գան կարճ ժամանակի մէջ պսակելու ձեր քրոտինքները:

Անուանեցի ժառանգաւորաց կարգը: Եւ ասիկայ կէտ մըն է որու վրայ կը ցանկանայ ձեր ուշադրութիւնը հրաւիրել մանաւանդ որ Ս. Պետրոս այս բանիս վրայ յիշատակութիւն մը կ'ընէ, թէ՛ և անուղղակի, իւր նամակին մէջ: Ո՛հ, որպիսի խնամով պէտք է մտնանք մշակել այս փափուկ տունկերը, որպէս զի օր մը կենաց և փրկութեան իրենց առատ պտուղներովը ուրախացնեն Աստուծոյ Եկեղեցին: Մ'ն ուրեմն, մի՛ խոսէք աշխատութիւն, մեծարելի Հարք, որպէս զի նախ արժանեօք, և ապա թուով միշտ աւելի աճին այս ամենաբնորոշ աղբյուրն ուռերը: Սակայն եթէ կ'ուզէք որ ձեր կղերց մէջ տիրէ հաստատուն և ճշմարիտ անտուածապաշտութիւն մը, պէտք է որ մշակեն անոնք սրբազան գիտութիւնները. պէտք է որ ճաշակին այն վսեմ ճշմարտութիւնները, որոնք բարեպաշտութեան և առաքինութեանց համար արգասաւոր ճարակ ու կերակուր են:

Աշխարհիս առաջին ժամանակներուն մէջ, փափկութեան Դրախտէն որ ճիշդ ձեր երկրին մէջ գրուած էր, կը բլթէր գետ մը որ զայն կ'ոռհզանէր: Այս գետը կը բաժնուէր ի չորս յառաջ, և այսպէտով հեռաւոր գաւառներու մէջ ևս կը տանէր արգասաւորութիւնն ու փարթամութիւնը: Սրբազան գիտութեանց ուսուցիչն, ո՛վ մեծարոյ Հարք, է ճիշդ այն վեհընթաց գետն որ կը բաժնուի չորս զովարար վտակներու, որոնք կը տանին պտղաբերութիւնն ու կեանքը նոյնքան արդիւնաշատ դաշտերու: Այս վտակներէն մին է Տեսական Աստուածաբանութիւնը, որ կը տանի առատութիւնը հաւատոյ դաշտին մէջ. միւսն է Բարոյականը որ կը ճոխացնէ գործոց դաշտը. երրորդն է ձգնականն (ascétique) որ կը բեղմնաւորէ առաքինութեան դաշտը. չորրորդն է Միստիքականն որ կը փարթամացնէ և կ'արդիւնաւորէ աղօթքի և Աստուծոյ հետ միութեան դաշտը:

Բայց այսչափ գեղեցիկ արդիւնքներու աւելի ապահովաբար հասնելու համար, պէտք է աշխատիք որ ձեր վարքը օրինակ ըլլայ ձեր հաւատացեալներուն: Հարկ է որ ձեզի հպատակ եղող ժառանգաւորք եկեղեցական կեանքի տիպարը իբրև ի պատկերի կերպարանաւորեալ գտնեն ձեր անձին վրայ. պէտք է որ դուք ինքնին կարող ըլլաք, սուրբ վստահութեամբ, ձեր օրինակը առաջի դնել անոնց ի նմանութիւն և ի քաջալերութիւն « Մի՛ իբրեւ թիբեյով վիմակացն, աշխիւնդ օրինակ հօգին. » (Ա. Պէտք, Ե. 3.) Եւ եթէ այս այսպէս ըլլայ, ո՛հ, որպիսի անանց փառաց լուսաշող պսակ պիտի ընդունիք դուք, ո՛վ արժանաւոր Դիտապետք, Հովիւներու Իշխանն. « Զի յերեւել Հովնապետին, ընդունիջիք զանթառամ փառաց պսակն (Անդ. 4.):

Սակայն ուրիշ ամենաժանր խրատ մըն ալ կուտայ ձեզ Առաքելապետը, որոյ

մեծ կարևորութիւնը անշուշտ ձեր ուշադրութենէն պիտի չլրիպի, ո՛վ մեծարեցի Հա՛րք: « Սոյնպէս, կ'ըսէ նա, եւ ետխասաւորօք, հնազանդ լերո՛ւք ծերոց » (Անդ. 5.): Արդ, այս ետխասաւորօք բառովը Ս. Գրոց խօսելու կերպին համաձայն, կ'իմացուի քրիստոնէական հօտը որ կը կազմուի աշխարհականներէ, դիմադրութեամբ Ենթոց կամ Երիցանց բառին, որոնցմով կ'իմացուին Եպիսկոպոսներն ու Քահանայները: Ուստի, Առաքեալը կը հրամայէ որ աշխարհականներն հնազանդ ըլլան Նուիրապետական կարգի, հնազանդութիւն մը՝ որ այնչափ հարկաւոր է Եկեղեցւոյն բարւոյն, որչափ զերագոյն չարիք մը պիտի ըլլար եթէ աշխարհականը կանգնէին իբր վարիչը կամ զատաւորը Եպիսկոպոսաց: Վա՛յ եթէ հնազանդիլ պարտողն հրամայէ, վա՛յ եթէ Եպիսկոպոսներն թոյլ տան ոտնակոխ ընել այն սրբազան իրաւունքները զորոնք Յիսուս Քրիստոս յանձնեց իրենց: Այս մասին, դիտողութեան արժանի են մեծ Եպիսկոպոս և Մարտիրոս Ս. Իգնատիոսի խօսքերը՝ առ Զմիւռնիացիս գրած թղթին մէջ. « Զեր մէջ ամէն բան կարգով կանոնով կատարուի Աշխարհականը հպատակ ըլլան սարկաւազներու. սարկաւազները՝ քահանայներու. քահանայը՝ Եպիսկոպոսներու, Եպիսկոպոսը՝ Քրիստոսի, ինչպէս և Նա իր Հօրը »: Մեծարել տուէ՛ք՝ ուրեմն, ո՛վ Հարք պատուականք, ձեր իշխանութիւնը, ո՛չ թէ փառասիրութենէ կամ ամբարտաւանութենէ տարուելով, այլ հնազանդելու համար Հոգւոյն Սրբոյ, որ զբաւ զձեզ զԵկեղեցին կառավարելու:

Այս վախճանիս դիւրութեամբ հասնել կարենալու համար՝ հիմնուեցէ՛ք խոնարհութեան վրայ, այս առաքինութեան առաջին օրինակը դուք տալով, որպէս զի իբր զշիտ տիրէ այն՝ ձեր հասարակութեան մէջ, ի պահպանութիւն բարեկարգութեան, խաղաղութեան, համաձայնութեան. « Ամենեքիւ ընդ միմիանս զխնատհաւրիւն ունեցիք, զի Աստուած ամբարտաւանից հակառակ կայ, թա՛յ շնորհս խնատհաց » (Անդ. 5.): Խնամ սարքէ՛ք ուրեմն ամենակալ Տեառն մեծվայելչութեան ներքեւ ցածոգի և խոնարհ վարուելու, և այս ձեր խոնարհութիւնը պիտի տրամադրէ ձեր հպատակ ժողովուրդները ձեզի հնազանդելու և ձեզի հետեւելու, առանց բնաւ ձեր վրայ անպատշաճ տիրապետութիւն մը գործածելու: Զեր խոնարհութիւնը պիտի արդիւնաւորէ ձեր և կրօնքին բարձրացումը. « Խոնարհեցաւո՛ւք ընդ հօր ձեռամբն Աստուծոյ զի զնեզ քատճացուցի ի ժամանակի » (Անդ. 6.):

(Շարունտիկի)

Ամսոյս 14 ին Սրբազան Քահանայապետը հանդիսաւոր Ունկնդրութիւն շնորհեց Սինոդականաց. յառաջիկայ թուով պիտի տանք անոր մանրամասնութիւնը:

Փ. Պիանկի

Տնօրէն Պատասխանատու

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ազգային Պատրիարքական Սինոդոսն ի Հոռով	հշ	313
Բանափառութիւն առ Սինոդոսն	, ,	321

